




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 76-Լ

«11» օգոստոսի 2025թ.

ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 65-րդ հոդվածով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 11-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>ՀՀԱզգանուն Անուն</u>	<u>Կողմ</u>	<u>Դեմ</u>	<u>Ձեռնպահ</u>	<u>ՀՀԱզգանուն Անուն</u>	<u>Կողմ</u>	<u>Դեմ</u>	<u>Ձեռնպահ</u>
1. Էդվարդ Ափոյան				8. Գոհար Նիկողոսյան			
2. Նաիրա Բասենցյան				9. Վահան Հախվերդյան			
3. Գևորգ Ղազարյան				10. Հրաչյա Ավետիսյան			
4. Լիլիթ Միրզախանյան				11. Արմեն Բաղդասարյան			
5. Ներսես Մելիքյան				12. Լուկա Նաչատուրյան			
6. Վարդան Գրիգորյան				13. Ռոմբիկ Ավագյան			
7. Կարեն Մովսիսյան				14. Նաիրա Գրիգորյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՄՀԵՐ ԿԱՐԵՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի ԹԻՎ 116 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 111-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8. ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9. ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10. ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՌԻԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՄԵԽԱԿՅԱՆ



**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 77-Ա

«11» օգոստոսի 2025թ.

ք. Էջմիածին

**ՄՀԵՐ ԿԱՐԵՆԻ ՄԿՐՏՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

- Միեր Կարենի Մկրտչյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավարի տեղակալ:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

<u>ՀՀ Ազգանուն Անուն</u>	<u>Կողմ</u>	<u>Դեմ</u>	<u>Չեղծակալ</u>	<u>ՀՀ Ազգանուն Անուն</u>	<u>Կողմ</u>	<u>Դեմ</u>	<u>Չեղծակալ</u>
1. Էդվարդ Ավոյան		_____	_____	8. Գոհար Նիկողոսյան		_____	_____
2. Նաիրա Բասեղյան		_____	_____	9. Վահան Հախվերդյան		_____	_____
3. Գևորգ Ղազարյան		_____	_____	10. Հրաչյա Ավետիսյան		_____	_____
4. Լիլիթ Միրզախանյան		_____	_____	11. Աղասի Բաղդասարյան		_____	_____
5. Ներսես Մելիքյան		_____	_____	12. Լուսինե Խաչատրյան		_____	_____
6. Վարդան Գրիգորյան		_____	_____	13. Մանին Ամարյան		_____	_____
7. Կարեն Մովսիսյան		_____	_____	14. Նաիրա Գրիգորյան		_____	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՄԵԽԱԿՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 78-Ա

«11» օգոստոսի 2025թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 693-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հավելվածի 2.3-րդ մասի «Արմավիրի մարզի համայնքներն ու բնակավայրերը» ցանկի 2-րդ կետը և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի 4-րդ մասը, Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 22-ի 87-Լ որոշումը, համաձայն որի Էջմիածնի քաղաքապետարանի թիվ 14 «Ձնծաղիկ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ը անվանափոխվել է Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 4 «Ձնծաղիկ» մսուր-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, ինչպես նաև հիմք ընդունելով Էջմիածնի համայնքապետարանի թիվ 14 «Ձնծաղիկ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության միջև 12.01.2021թ. /սեղանամատյան 133/ կնքված ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի 4.2-րդ կետը, Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպություն (ԵՆԿ ՀԿ) նախագահ՝

Արթուր Նաջարյանի դիմումը և Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը՝




Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համաձայնություն տալ Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 4 «Ձնծաղիկ» մսուր-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության միջև 12.01.2021թ. /սեղանամատյան 133/ կնքված ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2036 թվականի դեկտեմբերի 31-ը և կնքել վերոնշյալ պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր:

2. Պայմանագրի մյուս կետերը թողնել անփոփոխ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Հ/ՀԱզգանուն Անուն</u>	<u>Կողմ</u>	<u>Դեմ</u>	<u>Չեղևայտ</u>	<u>Հ/ՀԱզգանուն Անուն</u>	<u>Կողմ</u>	<u>Դեմ</u>	<u>Չեղևայտ</u>
1. Էդվարդ Ափոյան		_____	_____	8. Գոհար Նիկողոսյան		_____	_____
2. Նաիրա Բասենցյան		_____	_____	9. Վահան Հախվերդյան		_____	_____
3. Գևորգ Ղազարյան		_____	_____	10. Հրայր Ավետիսյան		_____	_____
4. Լիլիթ Միրզախանյան		_____	_____	11. Աղասի Բաղդասարյան		_____	_____
5. Ներսես Մելիքյան		_____	_____	12. Լևոն Խաչատրյան		_____	_____
6. Վարդան Գրիգորյան		_____	_____	13. Ռաֆիկ Ավագյան		_____	_____
7. Կարեն Մովսիսյան		_____	_____	14. Նաիրա Գրիգորյան		_____	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՄԵԽԱԿՅԱՆ





ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
GYUMRI "YOUTH INITIATIVE CENTRE" NGO

N° Ե136-07/25

02.07.2025թ.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՎԱՐԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՍԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ՆԱՋԱՐՅԱՆԻՑ
055858307, 095919197

ԴԻՄՈՒՄ

**«ԷՋՄԻԱՇՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏՈՒՆ» ԲԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՄԻՋԱՎԱՅՐԻ» ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՈՎ ՏՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ
ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հարգելի՛ պարոն Պետրոսյան,

ՀՀ Կառավարության գործունեության կարևոր առաջնահերթություններից է երիտասարդներին ուղղված քաղաքականության իրականացումը, որի հիմքում երիտասարդների զարգացման, նրանց ինքնաիրացման համար նպաստավոր պայմանների և միջավայրի ձևավորումն է: Իսկ համաձայն «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքով տրվող նոր իրավակարգավորումների, որոնցով նաև սահմանվում են տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված մի շարք լիազորություններ, կարևորվում է համայնքներում երիտասարդական քաղաքականության իրականացումը, երիտասարդական միջավայրերի (երիտասարդական կենտրոն, երիտասարդական տարածք) գործարկումը, որտեղ համայնքի 13-35 տարեկան երիտասարդները հնարավորություն կունենան երիտասարդական աշխատանքի սկզբունքով կազմակերպել տարբեր երիտասարդական միջոցառումներ, հանդիպումներ, քննարկումներ, ինտելեկտուալ ժամանց, և երիտասարդական ծառայությունների ապահովումը՝ նպատակաուղղված ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ երիտասարդի ձևավորմանը:

Այս ուղղությամբ ուրախ ենք արձանագրել, որ Վաղարշապատի համայնքապետարանի, Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ԵՆԿ ՀԿ) և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի միջև



վստահելի, արդյունավետ համագործակցության արդյունքում 2022 թվականին հիմնվել է «Էջմիածնի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն), որը երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությամբ և սկզբունքներով աշխատող երիտասարդական միջավայր է՝ նպատակաուղղված համայնքի 13-18 տարեկան պատանիների և երիտասարդների քաղաքացիական ակտիվության բարձրացմանն ու բարեկեցությանը, նոր հմտությունների զարգացմանը, ինքնաարտահայտմանը, ինտելեկտուալ ժամանցի կազմակերպմանը, սոցիալականացմանը և համայնքում դրական փոփոխությունների իրականացմանը:

«Էջմիածնի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի 164,6 քմ տարածքը (հասցե՝ ք. Էջմիածին, փ. Լեոնիդ Ազգալյան 7), որը հատկացվել է Վաղարշապատ համայնքի ավագանու 29.10.2021 թվականի N127 որոշման հիման վրա, 2022 թվականին ամբողջապես վերանորոգվել, կահավորվել և նյութատեխնիկապես հագեցվել է ԵՆԿ ՀԿ-ի կողմից:

Կենտրոնը քաղաքացիական կրթություն, կյանքի հիմնարար հմտություններ, մասնագիտական կողմնորոշում, առողջ ապրելակերպի խթանում, առաջնորդություն և նախաձեռնողականություն, ինտելեկտուալ ժամանց ուղղություններով ծառայություններ է մատուցում տարեկան 600 պատանիների և երիտասարդների, այդ թվում՝ սոցիալապես անապահով, սակավ հնարավորություններով, ինչպես նաև Արցախից տեղահանված:

2022 թվականից մինչ այսօր կենտրոնը Վաղարշապատի համայնքապետարանի և ԵՆԿ ՀԿ աջակցությամբ համայնքային երիտասարդական անվճար ծառայություններ՝ կրթական ակումբներ, աշխատարաններ, դասընթացներ, տեղեկատվություն և խորհրդատվություն, ուսումնաճանաչողական այցեր, էքսկուրսիաներ, արշավներ և ճամբարներ, ժամանցային և հանրային միջոցառումներ, անհատական կամ խմբային երիտասարդական աշխատանք, շարժական երիտասարդական աշխատանք, միջազգային փոխանակման ծրագրեր է տրամադրել 2421 երիտասարդների և պատանիների:

Հարգելի՛ պարոն Պետրոսյան,

Հիմք ընդունելով Կառավարության համար երիտասարդական քաղաքականության իրականացման առաջնահերթությունը, «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքը, Կենտրոնի աշխատանքները «Երիտասարդական միջավայրի» գործունեության նոր ուղեցույցով տրված պետական չափորոշիչներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը, Վաղարշապատ համայնքում երիտասարդական քաղաքականության իրականացման և համայնքային երիտասարդական ծառայությունների տրամադրման շուրջ





համայնքապետարանի և ԵՆԿ ՀԿ-ի միջև ձևավորված վստահելի ու արդյունավետ համագործակցությունը, ինչպես նաև կարևորելով համայնքապետարանի առանցքային դերը «Էջմիածնի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի անխափան գործունեություն ծավալելու և համայնքային երիտասարդական ծառայությունների շարունակական ապահովման հարցում՝ սույնով դիմում ենք Ձեզ՝ համայնքապետարանի կողմից տրամադրված տարածքի օգտագործման ժամկետի երկարաձգման, Կենտրոնի գործարկման ծախսերի վերանայման, շահառու խմբի տարիքային շրջանակի և մատուցվող ծառայությունների ընդլայման համար:

Համայնքապետարանի կողմից տրամադրված տարածքի օգտագործման ժամկետի երկարաձգումը, Կենտրոնի շահառու խմբի տարիքային շրջանակի և մատուցվող ծառայությունների ընդլայնումը պարտադիր պահանջ է Կենտրոնի աշխատանքները «Երիտասարդական միջավայրի» գործունեության նոր ուղեցույցով տրված պետական չափորոշիչներին համապատասխանեցնելու, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից 2025 թվականի սեպտեմբերից երիտասարդական կենտրոնների վերազինման նպատակով տրամադրվող դրամաշնորհին դիմելու, մասնագիտական աջակցություն և սուպերվիզիա ստանալու ու հեռանկարային պետական ծրագրեր իրականացնելու համար՝ ձևավորելով համայնքային համապարփակ երիտասարդական ծառայությունների մոդել: Այսպիսով, Կենտրոնի գործունեությունը դիտարկվում է ոչ միայն որպես համագործակցության հաջող օրինակ, այլ նաև համայնքի կողմից օրենքով սահմանված պարտավորությունների իրագործման միջոց:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք.

1) Տարածքի օգտագործման ժամկետի երկարացում

2022 թվականի հունվարի 12-ին Վաղարշապատ համայնքի թիվ 14 «Ձնծաղիկ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի և ԵՆԿ ՀԿ-ի միջև Վաղարշապատ համայնքի ավագանու 29.10.2021 թվականի N 127 որոշման հիման վրա կնքված գույքի անհատույց օգտագործման պայմանագրի ժամկետը երկարացնել 10 (տասը) տարի ժամանակով՝ սահմանելով մինչև 2036 թվականի դեկտեմբերի 31-ը:

2) Շահառու խմբի տարիքի ընդլայնում

Կենտրոնի ծառայությունները ներկայումս սահմանված 13-18 տարեկանի փոխարեն հասանելի դարձնել 13-35 տարեկան երիտասարդներին՝ համապատասխանեցնելով «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքով սահմանված չափանիշներին՝ ապահովելով համայնքի երիտասարդության լայն շրջանակի ընդգրկում՝ ներառյալ բարձրագույն կրթության փուլում

գտնվող, աշխատանք որոնող, ինչպես նաև սոցիալապես խոցելի խմբերի պատկանող երիտասարդներին:

3) Կենտրոնի գործարկման ծախսերի վերանայում

Վերանայել 2022 թվականի հունիսի 24-ին կենտրոնի գործարկման համար Վաղարշապատի համայնքապետարանի և ԵՆԿ ՀԿ-ի միջև կնքված նվիրաբերության ԷԵՏԲԵԿ/ԵՆԿ-ՎՀ 1-06/22 երկկողմ պայմանագրի ժամկետները և պայմանագրով սահմանված նվիրատվության չափը: 2026 թվականի հունվարի 1-ից կենտրոնի կողմից համայնքային երիտասարդական ծառայություններն արդյունավետ ու նպատակային իրականացնելու համար անհրաժեշտ է, որ համայնքապետարանը տարեկան կտրվածքով հոգա հետևյալ ծախսերը՝

- Կենտրոնի կոմունալ ծախսեր (վճարվում է անմիջապես համայնքապետարանի կողմից),
- Հեռահաղորդակցման (համացանց, հեռախոս) ծախսեր՝ 189.600 ՀՀ դրամ,
- Կենտրոնի ընթացիկ գործունեության նյութատեխնիկական և տրանսպորտային միջոցների հետ կապված ծախսեր՝ 218.000 ՀՀ դրամ,
- Ամենամյա բակային ճամբարի ծախսեր՝ 250.000 ՀՀ դրամ,
- Մարդկային ռեսուրսների հետ կապված ծախսեր՝ (կենտրոնի համակարգողի, երկու երիտասարդական աշխատողի, հոգեբանի և հավաքարարի աշխատավարձ) 8.580.000 ՀՀ դրամ,
- Բաց երիտասարդական կենտրոնի մոդելի ներդրման, գործարկման աշխատանքների կազմակերպման, մոնիթորինգի ու գնահատման իրականացման համար անհրաժեշտ ծախսեր՝ 2.406.000 ՀՀ դրամ,
- Գործուղման և ներկայացուցչական ծախսեր՝ (տրանսպորտ, օրապահիկ, գիշերակաց) 170.000 ՀՀ դրամ:

Տարեկան ընդհանուր 11.813.600 (տասնմեկ միլիոն ութ հարյուր տասներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ ներդնելու արդյունքում Վաղարշապատի համայնքապետարանի կողմից ԵՆԿ ՀԿ միջոցով կապահովվի երիտասարդական որակյալ ծառայությունների տրամադրում համայնքում 13-ից 35 տարեկան 700-800 երիտասարդների, այդ թվում՝ սոցիալապես անապահով, սակավ հնարավորություններով, ինչպես նաև Արցախից տեղահանված և այլ խոցելի խմբերի:

Իր հերթին, **ԵՆԿ ՀԿ-ն** կհոգա (մասնակի կամ ամբողջությամբ) հետևյալ ծախսերը՝

- Մարդկային ռեսուրսների, ընթացիկ գործունեության, թեմատիկ աշխատարանների, դասընթացների, մասնագիտական կողմնորոշման հանդիպումների, խորհրդատվությունների, ուսումնական և ճանաչողական այցերի, բակային ճամբարի, բաց երիտասարդական աշխատանքի մոդելի ներդնման, գործարկման,



ԳՅՈՒՄՐԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
GYUMRI "YOUTH INITIATIVE CENTRE" NGO

աշխատանքների կազմակերպման և մոնիտորինգի/գնահատման համար անհրաժեշտ
ծախսեր՝ 8.040.660 ՀՀ դրամ:

Տարեկան ընդհանուր՝ 8.040.660 (ութ միլիոն քառասուն հազար վեց հարյուր վաթսուն) ՀՀ
դրամ:

Տարեկան գործարկման նախահաշիվը ներկայացվում է դիմումին կից:

Մեզ համար անչափ կարևոր և գնահատելի է Վաղարշապատի համայնքապետարանի
հանձնառությունը՝ համայնքում երիտասարդական քաղաքականություն իրականացնելու և
համայնքային երիտասարդական ծառայությունների շարունակականությունը և
հասանելիությունը ապահովելու գործում:

Վստահ ենք, որ վերոգրյալ առաջարկները կհանդիսանան շարունակական
համագործակցության և համայնքում երիտասարդական քաղաքականության
ինստիտուցիոնալացման ամուր հիմք՝ ի շահ Վաղարշապատի երիտասարդների հզորացման,
ներգրավվածության և բարեկեցության:

Նախապես շնորհակալություն ենք հայտնում Ձեր պատրաստակամության և
համագործակցության համար:

Հարցերի դեպքում, սիրով պատրաստ ենք քննարկել:

Հարգանքով՝

Արթուր Նաջարյան

ԵՆԿ ՀԿ խորհրդի նախագահ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 79-Ա

«11» օգոստոսի 2025թ.

ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի ԹԻՎ 116 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպություն (ԵՆԿ ՀԿ) նախագահ՝ Արթուր Նաջարյանի դիմումը և Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին



ՈՐՈՇՈՒՄ Է

1. Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 24-ի «Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությանը ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին» թիվ 116-Ն որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Որոշման 1-ին կետի «(2022-2026 թթ.)» բառերը փոխել «(2026-2036 թթ.)» բառերով,

2) Որոշման 1-ին կետի «749 933 /յոթ հարյուր քառասունինը հազար ինը հարյուր երեսուներեք/» բառերը փոխել «984 467 /ինը հարյուր ութսունչորս հազար չորս հարյուր վաթսունյոթ/» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ին:

<u>ՀՀԱզգանուն Անուն</u>	<u>Կողմ</u>	<u>Դեմ</u>	<u>Չեղևակ</u>	<u>ՀՀԱզգանուն Անուն</u>	<u>Կողմ</u>	<u>Դեմ</u>	<u>Չեղևակ</u>
1. Էդվարդ Ափոյան		_____	_____	8. Գոհար Նիկողոսյան		_____	_____
2. Նաիրա Բասենցյան		_____	_____	9. Վահան Հախվերդյան		_____	_____
3. Գևորգ Ղազարյան		_____	_____	10. Հրաչյա Ավետիսյան		_____	_____
4. Լիլիթ Միրզախանյան		_____	_____	11. Աղասի Բաղդասարյան		_____	_____
5. Ներսես Մելիքյան		_____	_____	12. Լևոն Խաչատրյան		_____	_____
6. Վարդան Գրիգորյան		_____	_____	13. Ռաֆիկ Ավագյան		_____	_____
7. Կարեն Մովսիսյան		_____	_____	14. Նաիրա Գրիգորյան		_____	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՄԵԽԱԿՅԱՆ



ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻԿ

Բ/տ	Ծախսի նկարագրություն	Միավոր	Միավորի քանակ	Միավորի գին	Ընդամենը	Համայնքապետարանի ներդրում	ԵՆԿ ներդրում
1 Մարդկային ռեսուրսներ							
1.1	Կենտրոնի համակարգող / 100%	Ամիս	12	247 000	2 964 000	2 964 000	-
1.2	Երիտասարդական աշխատող / 2 անձ * 100%	Ամիս/անձ	24	180 000	4 320 000	4 320 000	-
1.3	Հոգեբան / 30%	Ամիս	12	63 000	756 000	756 000	-
1.4	Ընդունարանի աշխատակից / 50%	Ամիս	12	50 000	600 000	-	600 000
1.5	Ակումբավար, աշխատադրանների պատասխանատու	Ժամ	320	3 500	1 120 000	-	1 120 000
1.6	Հավաքարար / 30%	Ամիս	12	45 000	540 000	540 000	-
					Ընդամենը 1	10 300 000	8 580 000
2 Ընթացիկ գործունեության ծախսեր							
2.1	Հեռահաղորդակցում (Ինտերնետ, հեռախոս)	Ամիս	12	15 800	189 600	189 600	-
2.2	Գրենական և ընթացիկ գործունեության պարագաներ/սյուրսեր	Ամիս	12	7 000	84 000	84 000	-
2.3	Ծայրամասային թաղամասերում շարժական երիտասարդական աշխատանքի և ընթացիկ գործունեության համար տրանսպորտային ծախսեր	Ամիս	12	7 000	84 000	84 000	-
2.4	Ընթացիկ պահպանման ծախսեր	Տարի	1	100 000	100 000	50 000	50 000
2.5	Ամենամյա գերեկային բավային ճամբար	անգամ	1	400 000	400 000	250 000	150 000
2.6	Թեմատիկ աշխատարաններ, դասընթացներ, մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ, խորհրդատվություններ, ուսումնական և ճանաչողական այցեր	Միանգվազ	1	3 450 000	3 450 000	-	3 450 000
					Ընդամենը 2	4 307 600	657 600
					Ընդամենը 3	5 246 660	2 670 660
					ԸՆԴԱՄԵՆԸ 1 - 3	19 854 260	11 813 600
					ԸՆԴԱՄԵՆԸ 1 - 3	19 854 260	11 813 600



ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
GYUMRI "YOUTH INITIATIVE CENTRE" NGO

N° Ե136-07/25

02.07.2025թ.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՍԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ՆԱԶԱՐՅԱՆԻՑ
055858307, 095919197

ԴԻՄՈՒՄ

**«ԷԶՄԻԱԾՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏՈՒՆ» ԲԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՄԻՋԱՎԱՅՐԻ» ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՈՎ ՏՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ
ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հարգելի՛ պարոն Պետրոսյան,

ՀՀ Կառավարության գործունեության կարևոր առաջնահերթություններից է երիտասարդներին ուղղված քաղաքականության իրականացումը, որի հիմքում երիտասարդների զարգացման, նրանց ինքնաիրացման համար նպաստավոր պայմանների և միջավայրի ձևավորումն է: Իսկ համաձայն «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքով տրվող նոր իրավակարգավորումների, որոնցով նաև սահմանվում են տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված մի շարք լիազորություններ, կարևորվում է համայնքներում երիտասարդական քաղաքականության իրականացումը, երիտասարդական միջավայրերի (երիտասարդական կենտրոն, երիտասարդական տարածք) գործարկումը, որտեղ համայնքի 13-35 տարեկան երիտասարդները հնարավորություն կունենան երիտասարդական աշխատանքի սկզբունքով կազմակերպել տարբեր երիտասարդական միջոցառումներ, հանդիպումներ, քննարկումներ, ինտելեկտուալ ժամանց, և երիտասարդական ծառայությունների ապահովումը՝ նպատակաուղղված ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ երիտասարդի ձևավորմանը:

Այս ուղղությամբ ուրախ ենք արձանագրել, որ Վաղարշապատի համայնքապետարանի, Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ԵՆԿ ՀԿ) և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի միջև



վստահելի, արդյունավետ համագործակցության արդյունքում 2022 թվականին հիմնվել է «Էջմիածնի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն), որը երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությամբ և սկզբունքներով աշխատող երիտասարդական միջավայր է՝ նպատակաուղղված համայնքի 13-18 տարեկան պատանիների և երիտասարդների քաղաքացիական ակտիվության բարձրացմանն ու բարեկեցությանը, նոր հմտությունների զարգացմանը, ինքնաարտահայտմանը, ինտելեկտուալ ժամանցի կազմակերպմանը, սոցիալականացմանը և համայնքում դրական փոփոխությունների իրականացմանը:

«Էջմիածնի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի 164,6 քմ տարածքը (հասցե՝ ք. Էջմիածին, փ. Լեոնիդ Ազգալոյան 7), որը հատկացվել է Վաղարշապատ համայնքի ավագանու 29.10.2021 թվականի N127 որոշման հիման վրա, 2022 թվականին ամբողջապես վերանորոգվել, կահավորվել և նյութատեխնիկապես հագեցվել է ԵՆԿ ՀԿ-ի կողմից:

Կենտրոնը քաղաքացիական կրթություն, կյանքի հիմնարար հմտություններ, մասնագիտական կողմնորոշում, առողջ ապրելակերպի խթանում, առաջնորդություն և նախաձեռնողականություն, ինտելեկտուալ ժամանց ուղղություններով ծառայություններ է մատուցում տարեկան 600 պատանիների և երիտասարդների, այդ թվում՝ սոցիալապես անապահով, սակավ հնարավորություններով, ինչպես նաև Արցախից տեղահանված:

2022 թվականից մինչ այսօր կենտրոնը Վաղարշապատի համայնքապետարանի և ԵՆԿ ՀԿ աջակցությամբ համայնքային երիտասարդական անվճար ծառայություններ՝ կրթական ակումբներ, աշխատարաններ, դասընթացներ, տեղեկատվություն և խորհրդատվություն, ուսումնաճանաչողական այցեր, էքսկուրսիաներ, արշավներ և ճամբարներ, ժամանցային և հանրային միջոցառումներ, անհատական կամ խմբային երիտասարդական աշխատանք, շարժական երիտասարդական աշխատանք, միջազգային փոխանակման ծրագրեր է տրամադրել 2421 երիտասարդների և պատանիների:

Հարգելի՛ պարոն Պետրոսյան,

Հիմք ընդունելով Կառավարության համար երիտասարդական քաղաքականության իրականացման առաջնահերթությունը, «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքը, Կենտրոնի աշխատանքները «Երիտասարդական միջավայրի» գործունեության նոր ուղեցույցով տրված պետական չափորոշիչներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը, Վաղարշապատ համայնքում երիտասարդական քաղաքականության իրականացման և համայնքային երիտասարդական ծառայությունների տրամադրման շուրջ





համայնքապետարանի և ԵՆԿ ՀԿ-ի միջև ձևավորված վստահելի ու արդյունավետ համագործակցությունը, ինչպես նաև կարևորելով համայնքապետարանի առանցքային դերը «Էջմիածնի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի անխափան գործունեություն ծավալելու և համայնքային երիտասարդական ծառայությունների շարունակական ապահովման հարցում՝ սույնով դիմում ենք Ձեզ՝ համայնքապետարանի կողմից տրամադրված տարածքի օգտագործման ժամկետի երկարաձգման, Կենտրոնի գործարկման ծախսերի վերանայման, շահառու խմբի տարիքային շրջանակի և մատուցվող ծառայությունների ընդլայման համար:

Համայնքապետարանի կողմից տրամադրված տարածքի օգտագործման ժամկետի երկարաձգումը, Կենտրոնի շահառու խմբի տարիքային շրջանակի և մատուցվող ծառայությունների ընդլայնումը պարտադիր պահանջ է Կենտրոնի աշխատանքները «Երիտասարդական միջավայրի» գործունեության նոր ուղեցույցով տրված պետական չափորոշիչներին համապատասխանեցնելու, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից 2025 թվականի սեպտեմբերից երիտասարդական կենտրոնների վերազինման նպատակով տրամադրվող դրամաշնորհին դիմելու, մասնագիտական աջակցություն և սուպերվիզիա ստանալու ու հեռանկարային պետական ծրագրեր իրականացնելու համար՝ ձևավորելով համայնքային համապարփակ երիտասարդական ծառայությունների մոդել: Այսպիսով, Կենտրոնի գործունեությունը դիտարկվում է ոչ միայն որպես համագործակցության հաջող օրինակ, այլ նաև համայնքի կողմից օրենքով սահմանված պարտավորությունների իրագործման միջոց:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք.

1) Տարածքի օգտագործման ժամկետի երկարացում

2022 թվականի հունվարի 12-ին Վաղարշապատ համայնքի թիվ 14 «Ձնծաղիկ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի և ԵՆԿ ՀԿ-ի միջև Վաղարշապատ համայնքի ավագանու 29.10.2021 թվականի N 127 որոշման հիման վրա կնքված գույքի անհատույց օգտագործման պայմանագրի ժամկետը երկարացնել 10 (տասը) տարի ժամանակով՝ սահմանելով մինչև 2036 թվականի դեկտեմբերի 31-ը:

2) Շահառու խմբի տարիքի ընդլայնում

Կենտրոնի ծառայությունները ներկայումս սահմանված 13-18 տարեկանի փոխարեն հասանելի դարձնել 13-35 տարեկան երիտասարդներին՝ համապատասխանեցնելով «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքով սահմանված չափանիշներին՝ ապահովելով համայնքի երիտասարդության լայն շրջանակի ընդգրկում՝ ներառյալ բարձրագույն կրթության փուլում



գտնվող, աշխատանք որոնող, ինչպես նաև սոցիալապես խոցելի խմբերի պատկանող երիտասարդներին:

3) Կենտրոնի գործարկման ծախսերի վերանայում

Վերանայել 2022 թվականի հունիսի 24-ին կենտրոնի գործարկման համար Վաղարշապատի համայնքապետարանի և ԵՆԿ ՀԿ-ի միջև կնքված նվիրաբերության ԷԵՏԲԵԿ/ԵՆԿ-ՎՀ 1-06/22 երկկողմ պայմանագրի ժամկետները և պայմանագրով սահմանված նվիրատվության չափը: 2026 թվականի հունվարի 1-ից կենտրոնի կողմից համայնքային երիտասարդական ծառայություններն արդյունավետ ու նպատակային իրականացնելու համար անհրաժեշտ է, որ համայնքապետարանը տարեկան կտրվածքով հոգա հետևյալ ծախսերը՝

- Կենտրոնի կոմունալ ծախսեր (վճարվում է անմիջապես համայնքապետարանի կողմից),
- Հեռահաղորդակցման (համացանց, հեռախոս) ծախսեր՝ 189.600 ՀՀ դրամ,
- Կենտրոնի ընթացիկ գործունեության նյութատեխնիկական և տրանսպորտային միջոցների հետ կապված ծախսեր՝ 218.000 ՀՀ դրամ,
- Ամենամյա բակային ճամբարի ծախսեր՝ 250.000 ՀՀ դրամ,
- Մարդկային ռեսուրսների հետ կապված ծախսեր՝ (կենտրոնի համակարգողի, երկու երիտասարդական աշխատողի, հոգեբանի և հավաքարարի աշխատավարձ) 8.580.000 ՀՀ դրամ,
- Բաց երիտասարդական կենտրոնի մոդելի ներդրման, գործարկման աշխատանքների կազմակերպման, մոնիթորինգի ու գնահատման իրականացման համար անհրաժեշտ ծախսեր՝ 2.406.000 ՀՀ դրամ,
- Գործուղման և ներկայացուցչական ծախսեր՝ (տրանսպորտ, օրապահիկ, գիշերակաց) 170.000 ՀՀ դրամ:

Տարեկան ընդհանուր 11.813.600 (տասնմեկ միլիոն ութ հարյուր տասներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ ներդնելու արդյունքում Վաղարշապատի համայնքապետարանի կողմից ԵՆԿ ՀԿ միջոցով կապահովվի երիտասարդական որակյալ ծառայությունների տրամադրում համայնքում 13-ից 35 տարեկան 700-800 երիտասարդների, այդ թվում՝ սոցիալապես անապահով, սակավ հնարավորություններով, ինչպես նաև Արցախից տեղահանված և այլ խոցելի խմբերի:

Իր հերթին, **ԵՆԿ ՀԿ-ն** կհոգա (մասնակի կամ ամբողջությամբ) հետևյալ ծախսերը՝

- Մարդկային ռեսուրսների, ընթացիկ գործունեության, թեմատիկ աշխատարանների, դասընթացների, մասնագիտական կողմնորոշման հանդիպումների, խորհրդատվությունների, ուսումնական և ճանաչողական այցերի, բակային ճամբարի, բաց երիտասարդական աշխատանքի մոդելի ներդնման, գործարկման,



ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
GYUMRI "YOUTH INITIATIVE CENTRE" NGO

աշխատանքների կազմակերպման և մոնիտորինգի/գնահատման համար անհրաժեշտ
ծախսեր՝ 8.040.660 ՀՀ դրամ:

Տարեկան ընդհանուր՝ 8.040.660 (ութ միլիոն քառասուն հազար վեց հարյուր վաթսուն) ՀՀ
դրամ:

Տարեկան գործարկման նախահաշիվը ներկայացվում է դիմումին կից:

Մեզ համար անչափ կարևոր և գնահատելի է Վաղարշապատի համայնքապետարանի
հանձնառությունը՝ համայնքում երիտասարդական քաղաքականություն իրականացնելու և
համայնքային երիտասարդական ծառայությունների շարունակականությունը և
հասանելիությունը ապահովելու գործում:

Վստահ ենք, որ վերոգրյալ առաջարկները կհանդիսանան շարունակական
համագործակցության և համայնքում երիտասարդական քաղաքականության
ինստիտուցիոնալացման ամուր հիմք՝ ի շահ Վաղարշապատի երիտասարդների հզորացման,
ներգրավվածության և բարեկեցության:

Նախապես շնորհակալություն ենք հայտնում Ձեր պատրաստակամության և
համագործակցության համար:

Հարցերի դեպքում, սիրով պատրաստ ենք քննարկել:

Հարգանքով՝

Արթուր Նաջարյան

ԵՆԿ ՀԿ խորհրդի նախագահ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 80-Լ

«11» օգոստոսի 2025թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի և 65-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները, համայնքի ղեկավարի պաշտոնակատարի կողմից ներկայացված Վաղարշապատ համայնքի երկրորդ եռամսյակի բյուջեի կատարման հաշվետվությունը՝

Համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաստատել Վաղարշապատ համայնքի բյուջեի 2025 թվականի երկրորդ եռամսյակի կատարման հաշվետվությունը, համաձայն հավելված 1-ի և 2-ի.

1) Եկամտային մասով 1824042.7 հազար դրամ,

2) Ծախսային մասով 1866998.4 հազար դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>ՀՀ Ազգանուն Անուն</u>	<u>Կողմ</u>	<u>Դեմ</u>	<u>Ձեռնպահ</u>	<u>ՀՀ Ազգանուն Անուն</u>	<u>Կողմ</u>	<u>Դեմ</u>	<u>Ձեռնպահ</u>
1. Էդվարդ Ափոյան		_____	_____	8. Գոհար Նիկողոսյան		_____	_____
2. Նաիրա Բառեկցյան		_____	_____	9. Վահան Հախավերդյան		_____	_____
3. Գևորգ Ղազարյան		_____	_____	10. Հրաչյա Ավետիսյան		_____	_____
4. Լիլիթ Միրզախանյան		_____	_____	11. Աղասի Բաղդասարյան		_____	_____
5. Ներսես Մելիքյան		_____	_____	12. Լևոն Խաչատրյան		_____	_____
6. Վարդան Գրիգորյան		_____	_____	13. Ռաֆիկ Ուլազյան		_____	_____
7. Կարեն Մովսիսյան		_____	_____	14. Եսայա Գրիգորյան		_____	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ա. ՄԵԽԱԿՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վաղարշապատ համայնքի բյուջեով 2025թ. նախատեսվել են եկամուտներ 2494095.4 հազ. դրամ, նույն թվում դոտացիա հանրապետական բյուջեից 700413.7 հազ. դրամ:

Բյուջեի եկամուտների փաստացի մուտքը կազմել է 1824042.7 հազ. դրամ (73.1%), այդ թվում վարչական բյուջեի սեփական եկամուտներ՝ 113.7%: Տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 452503.0 հազ. դրամ:

Վաղարշապատ համայնքի բյուջեի 2025թ. երկրորդ եռամսյակի եկամուտների պլան-կատարողականը, ինչպես նաև 2024թ. երկրորդ եռամսյակի փաստացի կատարողականը ունի հետևյալ տեսքը.

Հազ.դրամ

Հ/Հ	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	2025թ. Պլան Երկրորդ եռամսյակ	2025թ. Կատարող. Երկրորդ եռամսյակ	2025թ. Կատ.%	2024թ. կատ. Երկրորդ եռամսյակ	2025/2024 նկատմ.
1	Հարկային եկամուտներ ընդամենը, որից՝	289250,0	311283,8	107,6%	307816,1	101,1%
40-1,2	Անշարժ գույք	61500,0	59015,7	96,0%	60168,3	98,1%
7-1	Գույքահարկ շինություններից	5000,0	4948,5	99,0%	9284,9	53,3%
7-2	Գույքահարկ փոխադրամիջոցներից	213000,0	234059,3	109,9%	213160,3	109,8%
9-1	Հողի հարկ	9750,0	13260,3	136,0%	25202,6	52,6%
16	Պետական տուրքեր ընդամենը, որից՝	22500,0	22755,3	101,1%	24278,1	93,7%
16-90	Պետ. տուրք ՔԿԱԳ բաժնից	7500,0	6645,5	88,6%	8112,1	81,9%
16-91	Պետ. տուրք նոտարական գրասենյակից	15000,0	16109,8	107,4%	16166,0	99,7%
45	Տեղական տուրքեր ընդամենը	90759,8	129096,3	142,2%	69732,3	185,1%
45	Օբյեկտները քանդելու աշխ. սկսելու թույլ. համար	195,0	226,0	115,9%	146,0	154,8%
45-5	Օբյեկ. վերակ. արդիակ. տեսքը փոխելու վճար	40,0	85,0	212,5%	10,0	850,0%
45-6	Հիմնական և ոչ հիմնական շին. ներսում ոգելից խմ. վաճ. համար	7910,0	7436,0	94,0%	7004,1	106,2%
45-8	Հիմնական և ոչ հիմնական շին. ներսում ծխախոտի վաճ. համար	4112,5	4657,1	113,2%	4744,1	98,2%
45-10	Գազի բացօթյա վաճառքի թույլտվություն	5300,0	6100,0	115,1%	5900,0	103,4%
45-11	Վառելիքաքսայուղերի վաճառքի թույլտվ.	4440,0	4547,2	102,4%	5210,8	87,3%
45-13	Այլ ապրանքների բացօթյա վաճ. թույլտվություն	2552,3	4553,4	178,4%	3770,0	120,8%
45-16	Հանրային սննդի կազմակերպ. թույլտվություն 24:00-ից հետո	5880,0	6839,0	116,3%	5358,7	127,6%
45-21	Այլ արտաքին գովազդ	23940,0	21093,4	88,1%	20878,8	101,0%
